ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի _Արագած համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արագած, 0231-6-62-02 aragats.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 45

ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի հինգերորդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 19-ի նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀՐԱՉՅԱ
2. ԱՎԱԳՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԲԱՎԱԿԱՆ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՆՆԱ
5. ԹԱԴԵՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԳԱՐԻԿ
7. ՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԿԱՄԱՎՈՍՅԱՆ

2016 թվական դեկտեմբերի 19
գ. Արագած, ժամը՝ 12:00

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արագած համայնքի
ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 19-ի
թիվ 45 որոշման

Օրակարգ

Արագած համայնքի ավագանու նիստի օրակարգը հաստատելու մասին
(զեկուցող՝ գյուղապետ պարոն Ա. Կամավոսյան)

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին
(զեկուցող՝ գյուղապետ պարոն Ա. Կամավոսյան)

Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու կարգը հաստատելու մասին
(զեկուցող՝ գյուղապետ պարոն Ա. Կամավոսյան)

Աշխատակազմի քարտուղար՝ ---------- Ն. Արսենյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի _Արագած համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արագած, 0231-6-62-02 aragats.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 46-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 54-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով ՝ ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի 2014 թվականի բյուջեն՝ եկամուտների գծով 57064,6 հազար դրամ, ծախսերի գծով՝ 57064,6 հազար դրամ, դեֆիցիտը /պակասորդ/ 0.0 հազար դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀՐԱՉՅԱ
2. ԱՎԱԳՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԲԱՎԱԿԱՆ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՆՆԱ
5. ԹԱԴԵՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԳԱՐԻԿ
7. ՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԿԱՄԱՎՈՍՅԱՆ

2016 թվական դեկտեմբերի 19
գ. Արագած, ժամը՝ 12:00

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Արագած համայնքի ավագանու 2016
թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 46-Ն որոշման

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի 2017 թվականի բյուջեն՝ եկամուտների գծով՝ 57234,2 հազար դրամ, ծախսերի գծով՝ 57234,2 հազար դրամ, դեֆիցիտը /պակասորդ/ 0.0 հազար դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:
5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասորդը/՝ համաձայն հատված 4-ի:
6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի / պակասորդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի:
7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:
8. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:
9. Սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել չափաքանակների 50 տոկոսը:

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Արսենյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի _Արագած համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արագած, 0231-6-62-02 aragats.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 47-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀՐԱՉՅԱ
2. ԱՎԱԳՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԲԱՎԱԿԱՆ
4. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՆՆԱ
5. ԹԱԴԵՈՍՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԳԱՐԻԿ
7. ՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԿԱՄԱՎՈՍՅԱՆ

2016 թվական դեկտեմբերի 19
գ. Արագած, ժամը՝ 12:00

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Արագած համայնքի ավագանու 2016
թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 47-Ն որոշման

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին /հետագայում՝ քաղաքացիներ/ «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու կարգը:
2. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի պատվավոր քաղաքացի» կոչումը պատվավոր կոչում է՝ նախատեսված «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:
3. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի պատվավոր քաղաքացի» կոչումը շնորհվում է Արագած համայնքի ավագանու կողմից, համայնքի ղեկավարի առաջարկությամբ՝ սույն կարգին համապատասխան:
4. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի պատվավոր քաղաքացի» կոչմանը կարող են արժանանալ, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, զույգային և այլ դրությունից, այն քաղաքացիները, որոնք իրենց երկարամյա անբասիր աշխատանքով և /կամ/ բացառիկ մեծ վաստակով նպաստել են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի բարգավաճմանը, ակնառու ներդրում ունեն համայնքի տնտեսական, մշակութային զարգացման գործում, իրենց կյանքում ու անցած ուղով նպաստել են ժողովուրդների բարեկամության և խաղաղության հաստատմանը, անուրանալի ավանդ ունեն մշակույթի, արվեստի, գրականության կամ գիտության զարգացման բնագավառում:
5. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու գրավոր առաջարկով կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական միավորումները, հիմնադրամները, իրավաբանական անձանց միությունները, հասարակության լայն զանգվածները և մշակութային, կրթական, գիտական կազմակերպությունները, Հայ Առաքելական եկեղեցին, պետական կառավարման մարմինները, որոնք պարտավոր են հիմնավորել իրենց առաջարկը, համակողմանիորեն լուսաբանել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի պատվավոր քաղաքացի» կոչմանը ներկայացվող քաղաքացու կյանքը, գործունեությունը, ներկայացնել համապատասխան նյութեր և քաղաքացու լուսանկարը:
6. Ստացված առաջարկությունները ներկայացվում են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի ղեկավարին:
7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի ղեկավարի առաջարկությամբ համայնքի ավագանին որոշում է ընդունում «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի պատվավոր քաղաքացու» կոչում շնորհելու մասին:
8. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի պատվավոր քաղաքացուն հանդիսավոր պայմաններում հանձնվում է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի պատվավոր քաղաքացու» կոչում շնորհելու վերաբերյալ համայնքի ավագանու

որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի պատվավոր քաղաքացու վկայականը:

9. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի պատվավոր քաղաքացու անունը գրանցվում է Արագածի գյուղապետարանում պահվող, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի պատվավոր քաղաքացիների հաշվառման հատուկ գրքում:
10. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի պատվավոր քաղաքացուն հանձնվող վկայականի և հաշվառման հատուկ գրքի ձևերը հաստատում է համայնքի ավագանին:
11. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին համայնքի ավագանու որոշումը և համայնքի պատվավոր քաղաքացու կյանքը և գործունեությունը պարտադիր լուսաբանվում է զանգվածային լրատվության միջոցներով:
12. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի ավագանու որոշումներով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագած համայնքի պատվավոր քաղաքացիների համար կարող են սահմանվել արտոնություններ:

Արագածի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար՝ _____ Ն. Արսենյան